

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

« _ » _____ 2008թ.

2010թ. նոյեմբերի 30-ի
փոփոխություններով և լրացումներով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Շուկա ստեղծող»**. Բորսայի անդամ, որը Բորսայի կանոններով սահմանված կարգով բորսայական առևտրին թույլատրված որևէ դասի արժեթղթերի գինը պահպանելու, սահմանելու կամ կայունացնելու նպատակով իր անունից և իր հաշվին կնքում է տվյալ դասի արժեթղթերով գործարքներ:
- 3) **«Հայտ»**. առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված՝ թողարկողի նույն դասի արժեթղթերի գնման/վաճառքի առաջարկ, որտեղ նշվում են Բորսայի կանոններով սահմանված այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները:
- 4) **«Գնանշում»**. արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով առևտրային համակարգում արժեթղթի գնման և/կամ վաճառքի գնի հայտարարում:
- 5) **«Երկկողմանի գնանշում»**. առևտրային համակարգում Շուկա ստեղծողի կողմից տվյալ դասի արժեթղթերի առնվազն մեկ գնման և մեկ վաճառքի գնի միաժամանակյա հայտարարումը:
- 6) **«Գնանշման ծավալ»**. հայտում նշված գնման կամ վաճառքի ենթակա արժեթղթի քանակ:
- 7) **«Շուկա ստեղծողի սպրեդ»**. Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգ մուտքագրված համապատասխան դասի արժեթղթերի գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների տարբերությունը:
- 8) **«Լրիվ նախնական դեպոնացմամբ առևտուր»**. Բորսայի կողմից արժեթղթերով կազմակերպվող հրապարակային առևտրի ձև, որի ընթացքում Բորսայի անդամը գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված արժեթղթերի և դրամական միջոցների սահմաններում:
- 9) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

- 1) Բորսան Շուկա ստեղծողի կարգավիճակ կարող է շնորհել միայն իր անդամին: Շուկա ստեղծողի կարգավիճակը շնորհվում է առանձին՝ ըստ բորսայական առևտրին թույլատրված արժեթղթերի յուրաքանչյուր դասի, և գործում է բացառապես արժեթղթերի և դրամական միջոցների լրիվ նախնական դեպոնացմամբ իրականացվող բորսայական առևտրի ժամանակ:
- 2) Արժեթղթերի նույն դասի Շուկա ստեղծողի կարգավիճակ կարող է շնորհվել Բորսայի մի քանի անդամի:
- 3) Բորսայի անդամին որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհումը Բորսայի տվյալ անդամի համար լրացուցիչ արտոնություններ և/կամ սահմանափակումներ չի առաջացնում այլ դասի արժեթղթերի նկատմամբ:

Գլուխ 3. Շուկա ստեղծողին ներկայացվող պահանջները

- 1) Շուկա ստեղծողի կարգավիճակ կարող է հայցել Բորսայի անդամը, որի՝ որևէ դասի արժեթղթի Շուկա ստեղծողի կարգավիճակը հարկադիր չի դադարեցվել վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում:

Գլուխ 4. Շուկա ստեղծողի գործունեությանը ներկայացվող պահանջները

- 1) Շուկա ստեղծողի կարգավիճակ ստացած Բորսայի անդամը պարտավոր է՝
 - ա) առևտրային նստաշրջանի բացման պահից առավելագույնը 10 (տաս) րոպե հետո մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը տվյալ դասի արժեթղթերով անընդհատ ապահովել երկկողմանի գնանշում, բացառությամբ սույն կետի բ) ենթակետով սահմանված դեպքի,

- բ) երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում երեք թույլեում ապահովել նոր երկկողմանի գնանշում,
 - գ) երկկողմանի գնանշման ընթացքում ապահովել տվյալ դասի արժեթղթերի համար սահմանված նվազագույն գնանշման ծավալը՝ մասնակի բավարարման պայմանով,
 - դ) նախաառևտրային և առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերով երկկողմանի գնանշումը կատարել սույն կանոններով սահմանված սպրեդի սահմաններում,
(դ) կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
 - ե) նույն առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ դասի արժեթղթերով երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքել առնվազն մեկ գործարք:
- 2) Եթե առևտրային նստաշրջանի ընթացքում սույն գլխի 1) կետի գ) և/կամ դ) ենթակետերով սահմանված նվազագույն գնանշման ծավալի և/կամ սպրեդի չափերը խախտվել են առևտրային համակարգում կնքված գործարքի արդյունքում, ապա Շուկա ստեղծողը պարտավոր է երեք թույլեում, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ անմիջապես վերականգնել նվազագույն գնանշման ծավալի և/կամ սպրեդի՝ սույն կանոններով սահմանված չափերը:
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքում Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը բաժնային արժեթղթերի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՇՍՍ} = \frac{(Q_{\text{վճճԱՌ.ՌԲՅՆ}} - Q_{\text{ԱՌ.Ք}})_{\text{վճճԱՌ.Ք}}}{Q_{\text{ԱՌ.Ք}}_{\text{ԱՌ.Ք}}} * 100\%$$

որտեղ՝

ՇՍՍ - Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդի չափն է՝ արտահայտված տոկոսներով,

$Q_{\text{վճճԱՌ.ՌԲՅՆ}}_{\text{վճճԱՌ.Ք}}$ Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ դասի արժեթղթերի վաճառքի հայտերի լավագույն (ամենացածր) գինն է,

$Q_{\text{ԱՌ.Ք}}_{\text{ԱՌ.Ք}}$ Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ դասի արժեթղթերի գնման հայտերի լավագույն (ամենաբարձր) գինն է:

- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը կորպորատիվ պարտատոմսերի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՇՍՍ} = \frac{(\text{Ե կ}_{\text{ԱՌ.Ք}} - \text{Ե կ}_{\text{վճճԱՌ.Ք}})}{\text{Ե կ}_{\text{վճճԱՌ.Ք}}} \times 100\%$$

որտեղ՝

ՇՍՍ - Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդի չափն է՝ արտահայտված տոկոսներով,

$\text{Ե կ}_{\text{ԱՌ.Ք}}$ Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ դասի կորպորատիվ պարտատոմսերի գնման հայտերի լավագույն (ամենաբարձր) գնին համապատասխանող տարեկան եկամտաբերությունն է՝ հաշվարկված այդ պարտատոմսերի թողարկողի կողմից Բորսային տրամադրված բանաձևով:

$\text{Ե կ}_{\text{վճճԱՌ.Ք}}$ Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ դասի կորպորատիվ պարտատոմսերի վաճառքի հայտերի լավագույն (ամենացածր) գնին համապատասխանող տարեկան եկամտաբերությունն է՝ հաշվարկված այդ պարտատոմսերի թողարկողի կողմից Բորսային տրամադրված բանաձևով:

- 5) Կորպորատիվ պարտատոմսերի համար Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը չպետք է գերազանցի 7 (յոթ) տոկոսը:
- 6) Կորպորատիվ պարտատոմսերի յուրաքանչյուր դասի (տրանշի) համար գնման կամ վաճառքի հայտում նշվող նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է մեկ արժեթղթի ճշտությամբ՝

- տվյալ դասի (տրանշի) թողարկված պարտատոմսերի քանակի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
- 7) Բաժնային արժեթղթերի համար Շուկա ստեղծողի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը չպետք է գերազանցի 5 (հինգ) տոկոսը:
 - 8) Բաժնային արժեթղթերի համար գնման կամ վաճառքի հայտում նշվող նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է մեկ արժեթղթի ճշտությամբ՝ հետևյալ կարգով՝
 - ա) մինչև հինգ հարյուր միլիոն ՀՀ դրամ կապիտալիզացիա ունեցող յուրաքանչյուր դասի արժեթղթերի համար նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ դասի թողարկված արժեթղթերի քանակի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով,
 - բ) հինգ հարյուր միլիոնից մինչև յոթ հարյուր հիսուն միլիոն ՀՀ դրամ կապիտալիզացիա ունեցող յուրաքանչյուր դասի արժեթղթերի համար նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ դասի թողարկված արժեթղթերի քանակի 0.04 (զրո ամբողջ չորս հարյուրերորդական) տոկոսի չափով,
 - գ) յոթ հարյուր հիսուն միլիոնից մինչև մեկ միլիարդ ՀՀ դրամ կապիտալիզացիա ունեցող յուրաքանչյուր դասի արժեթղթերի համար նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ դասի թողարկված արժեթղթերի քանակի 0.03 (զրո ամբողջ երեք հարյուրերորդական) տոկոսի չափով,
 - դ) մեկ միլիարդից մինչև հինգ միլիարդ ՀՀ դրամ կապիտալիզացիա ունեցող յուրաքանչյուր դասի արժեթղթերի համար նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ դասի թողարկված արժեթղթերի քանակի 0.02 (զրո ամբողջ երկու հարյուրերորդական) տոկոսի չափով,
 - ե) հինգ միլիարդ ՀՀ դրամ և ավել կապիտալիզացիա ունեցող յուրաքանչյուր դասի արժեթղթերի համար նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ դասի թողարկված արժեթղթերի քանակի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով:
 - 9) Սույն գլխի 7) կետով սահմանված նվազագույն գնանշման ծավալի հաշվարկման համար յուրաքանչյուր դասի բաժնային արժեթղթերի կապիտալիզացիան հաշվարկվում է նախորդ առևտրային նստաշրջանի փակման դրությամբ Բորսայում տվյալ դասի արժեթղթերով կնքված վերջին գործարքի գնով, իսկ տվյալ դասի արժեթղթերով բորսայական գործարքի բացակայության դեպքում՝ այդ արժեթղթերի անվանական արժեքով:

Գլուխ 5. Շուկա ստեղծողի իրավունքները

- 1) Շուկա ստեղծողն իրավունք ունի՝
 - ա) փոփոխել երկկողմանի գնանշումը սույն կանոններով սահմանված՝ Շուկա ստեղծողի սպրեդի սահմաններում՝ հաշվի առնելով սույն կանոնների 4-րդ գլխի 1) կետի ե) ենթակետում նշված սահմանափակումները,
 - բ) չկատարել երկկողմանի գնանշման պարտավորությունը, եթե տվյալ առևտրային օրվա ընթացքում իր անունից և իր հաշվին կնքած գործարքների ընդհանուր ծավալը գերազանցում է տվյալ դասի արժեթղթերի համար սույն կանոններով սահմանված նվազագույն գնանշման ծավալի չափը:
(բ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 2) Բորսայի անդամն ազատվում է սույն կանոններով սահմանված՝ Շուկա ստեղծողի գործունեության պահանջների կատարումից, եթե Բորսայում կասեցվել է այն դասի արժեթղթերի առևտուրը, որով Բորսայի անդամը Շուկա ստեղծողի գործունեություն է իրականացնում՝ տվյալ դասի արժեթղթերի առևտրի կասեցման ժամկետով:
- 3) Շուկա ստեղծողն իրավունք ունի Բորսայի առևտրային համակարգում գործարքներ կնքել իր անունից և հաճախորդի հաշվին, որոնց վրա չեն տարածվում Շուկա ստեղծողի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջները, արտոնությունը և սահմանափակումները:

Գլուխ 6. Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման կարգը

- 1) Բորսայի անդամին բորսայական առևտրին թույլատրված որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակ շնորհելու մասին որոշումն ընդունում է Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը՝ սույն գլխով սահմանված կարգով:

- 2) Բորսայի անդամը բորսայական առևտրին թույլատրված որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակ ստանալու համար պետք է սույն կանոնների Հավելված 1-ին համապատասխան Բորսա ներկայացնի Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման դիմում (այսուհետ՝ նաև Դիմում):
- 3) Դիմումը ներկայացված է համարվում Բորսայում դրա ստացման պահից: Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը դիմումի ստացման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պետք է դիմումի մերժման կամ բավարարման մասին որոշում ընդունի:
- 4) Բորսայի անդամին որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակը շնորհված է համարվում Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան որոշման ընդունման օրը: Որոշման ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առևտրային օրվանից Բորսայի տվյալ անդամը Բորսայում պարտավոր է տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի գործունեություն իրականացնել:

Գլուխ 7. Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման դիմումի մերժումը

- 1) Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման դիմումը մերժվում է, եթե՝
 - ա) դիմումը ներկայացրած Բորսայի անդամը չի բավարարում սույն կանոնների 3-րդ գլխի պահանջներին,
 - բ) դիմումում պահանջվող տեղեկությունները լիարժեք չեն կամ դրանցում փաստ է խեղաթյուրվել,
 - գ) դիմումի քննարկման ժամանակահատվածում կասեցվել է Բորսայի տվյալ անդամի՝ Բորսայում գործարքներ կնքելու իրավունքը կամ անդամությունը Բորսայում,
 - դ) դիմումում նշված արժեթղթերը բորսայական առևտրին թույլատրելու հայտ Բորսան չի ստացել կամ այդ հայտը մերժվել է,
 - ե) առկա է օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումներին (նորմատիվ իրավական ակտերին) և Բորսայի կանոններին որևէ անհամապատասխանություն:
- 2) Դիմումի մերժման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշման մեջ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
- 3) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը չի կարող սույն գլխով չնախատեսված հիմքերով դիմումի մերժման մասին որոշում ընդունել:
- 4) Դիմումի մերժման դեպքում Բորսայի անդամն իրավունք ունի որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման վերաբերյալ նոր դիմում ներկայացնել սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով:

Գլուխ 8. Շուկա ստեղծողի կարգավիճակի կասեցումը

- 1) Շուկա ստեղծողի կարգավիճակը կասեցված է համարվում, եթե՝
 - ա) կասեցվել է Շուկա ստեղծողի կարգավիճակ ունեցող Բորսայի տվյալ անդամի՝ Բորսայում գործարքներ կնքելու իրավունքը՝ իրավունքի կասեցման ժամկետով,
 - բ) կասեցվել է Շուկա ստեղծողի կարգավիճակ ունեցող Բորսայի տվյալ անդամի անդամությունը՝ անդամության կասեցման ժամկետով:
- 2) Շուկա ստեղծողի կարգավիճակի կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

Գլուխ 9. Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցումը

- 1) Բորսայի անդամը կարող է հրաժարվել որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակից՝
 - ա) եթե սույն կանոններում և/կամ Բորսայի այլ կանոններում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների արդյունքում խստացվել են Շուկա ստեղծողին և/կամ նրա գործունեությանը ներկայացվող պահանջները,
 - բ) սույն գլխի ա) ենթակետում չնշված այլ դեպքերում՝ կամավոր սկզբունքով:
- 2) Որևէ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակից Բորսայի անդամը կարող է հրաժարվել գրավոր դիմելով Բորսային: Դիմումը ներկայացված է համարվում Բորսայում դրա ստացման պահից:

- 3) Սույն գլխի 1) կետի ա) ենթակետին համապատասխան Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարվելու դեպքում Բորսայի անդամը պետք է կանոններում համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում ներկայացնի Բորսա՝ մանրամասն ներկայացնելով հրաժարման հիմքերը: Դիմումը մերժելու կամ բավարարելու մասին որոշում ընդունում է Բորսայի դիտորդ խորհուրդը: Դիմումը բավարարելու մասին որոշման ընդունման դեպքում Շուկա ստեղծողի կարգավիճակը դադարեցված է համարվում Բորսայի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:
- 4) Սույն գլխի 1) կետի բ) ենթակետին համապատասխան Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարվելու դեպքում Բորսայի անդամից ստացված գրավոր դիմումի հիման վրա կատարվում է Շուկա ստեղծողի կարգավիճակով իրականացված գործունեության շրջանակներում դիմումի ներկայացման օրվան նախորդող երեք ամիսների ընթացքում Բորսայի տվյալ անդամի կողմից Բորսային կատարված վճարումների վերահաշվարկ Բորսայում տվյալ ժամանակահատվածի համար գործող (գործած) ընդհանուր դրույքաչափերով: Վերահաշվարկի արդյունքում հաշվարկված վճարների և տվյալ ժամանակահատվածում Բորսայի տվյալ անդամի կողմից կատարած փաստացի վճարումների տարբերության դեպքում Բորսան կազմում է համապատասխան Հաշիվ-սայրանքագիր, որի մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է Բորսայի համապատասխան անդամին, որը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարել համապատասխան գումարը:
- 5) Սույն գլխի 1) կետի բ) ենթակետին համապատասխան Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարվելու դեպքում Բորսայի անդամի՝ Շուկա ստեղծողի կարգավիճակը դադարեցված է համարվում Բորսայում համապատասխան դիմումի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:
- 6) Բորսայի անդամի՝ Շուկա ստեղծողի կարգավիճակն ինքնաբերաբար դադարում է, եթե՝
 - ա) դադարել է այն դասի արժեթղթերի բորսայական առևտրին թույլտվությունը, որոնցով Բորսայի տվյալ անդամն իրականացնում է Շուկա ստեղծողի գործունեություն,
 - բ) Բորսայի տվյալ անդամի անդամությունը չեղյալ է հայտարարվել կամ դադարել է,
 - գ) ՀՀ օրենսդրությունում, ՀՀ այլ իրավական ակտերում և/կամ Բորսայի կանոններում տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք անհնարին են դարձնում տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակով Բորսայի տվյալ անդամի հետագա գործունեությունը:
- 7) Բորսայի անդամի՝ Շուկա ստեղծողի կարգավիճակը կարող է հարկադիր դադարեցվել, եթե՝
 - ա) Բորսայի անդամը չի կատարել Շուկա ստեղծողի կարգավիճակից բխող պարտավորությունները,
 - բ) առկա է Օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումների (նորմատիվ իրավական ակտերին) և/կամ Բորսայի կանոններին Շուկա ստեղծողի գործունեության որևէ անհամապատասխանություն կամ դրանցով սահմանված՝ Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցման որևէ այլ հիմք:
- 8) Սույն գլխի 7) կետով սահմանված որևէ հիմքով Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցման որոշում կարող է ընդունել Բորսայի Դիտորդ խորհուրդը, որի դեպքում Շուկա ստեղծողի կարգավիճակը դադարեցված է համարվում որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- 9) Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցման դեպքում Բորսան պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում առևտրային համակարգի միջոցով այդ մասին տեղեկացնել Բորսայի անդամներին՝ նշելով դադարեցման հիմքերը:
- 10) Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարված, Շուկա ստեղծողի կարգավիճակը դադարած կամ հարկադիր դադարեցված Բորսայի անդամը տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման նոր դիմում Բորսա կարող է ներկայացնել սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով:

Գլուխ 10. Շուկա ստեղծողի գործունեության արտոնությունը

- 1) Եթե գործարքի կողմը գործարքի առարկա արժեթղթերի Շուկա ստեղծողն է, ապա նրա համար, որպես արտոնություն, սահմանվում և Բորսայի կողմից նրանից գանձվում է

նվազեցված բորսայական միջնորդավճար, քան սահմանված է տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակ չունեցող՝ Բորսայի այլ անդամների համար:

- 2) Սույն գլխի 1) կետով սահմանված բորսայական միջնորդավճարների չափերը սահմանվում են Բորսայի «Սակագների մասին կանոններով»:

Գլուխ 11. Շուկա ստեղծողի նկատմամբ սահմանված պահանջների պահպանման վերահսկումը

- 1) Սույն կանոնների պահանջների պահպանման վերահսկողությունն իրականացնում է Բորսան:
- 2) Սույն կանոնների պահպանման վերահսկողության շրջանակներում ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 12. Շուկա ստեղծողի պատասխանատվությունը

- 1) Սույն կանոններով Շուկա ստեղծողի գործունեության նկատմամբ սահմանված պահանջների խախտման համար Շուկա ստեղծողի գործունեություն իրականացնող Բորսայի անդամը պատասխանատվություն է կրում Բորսայի կանոններով սահմանված կարգով:
- 2) Շուկա ստեղծողի գործունեության նկատմամբ սահմանված պահանջների խախտման համար Շուկա ստեղծողի գործունեություն իրականացնող Բորսայի անդամն ազատվում է պատասխանատվությունից, եթե՝
 - ա) իր կողմից պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը արդյունք է եղել Բորսայի առևտրային համակարգի սերվերների կամ դրանց միանալու հնարավորության հետ կապված տեխնիկական վթարի ազդեցության,
 - բ) իր կողմից պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը արդյունք է եղել անհատրաստի ուժի ազդեցության, ընդ որում՝ սույն ենթակետի իմաստով ֆորս-մաժորային հանգամանքներ չեն համարվում գործադուլները, ստանձնած պարտավորությունների խախտումը Բորսայի տվյալ անդամի կոնտրագենտների կողմից և այլն, որոնք Բորսայի անդամը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

Գլուխ 13. Անցումային դրույթներ

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Հավելվածը սույն կանոնների բաղկացուցիչ մասն է և կանոնների հետ կազմում է մեկ միասնական փաստաթուղթ:

Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Յոհան Ֆրեդիոլմ**

«13» հունիսի 2008թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/097Լ

ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ
Գործադիր մարմնի ղեկավարին

Շուկա ստեղծողի կարգավիճակի հայցման դիմում

Սույնով հայցվում է _____-ին շնորհել
(դիմորդի լրիվ հայերեն անվանումը)

_____ ,
(նշվում է բողարկողի լրիվ հայերեն անվանումը)

_____ (_____),
(նշվում է արժեթղթի դասը (տեսակը) (նշվում է արժեթղթի բորսայական հապավումը)

Շուկա ստեղծողի կարգավիճակ:

Միաժամանակ պարտավորություն ենք ստանձնում պահպանել ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ «Շուկա ստեղծողի կանոններով» սահմանված և Շուկա ստեղծողի գործունեությանը ներկայացվող բոլոր պահանջները, ինչպես նաև բարեխղճորեն կատարել Շուկա ստեղծողի կարգավիճակից բխող և Շուկա ստեղծողի գործունեության արդյունքում մեր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները:

(Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն)

(Գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Կ.Տ.